

# Ֆինանսական ճգնաժամ

Կազմակերպությունում աշխատում են  $n$  հոգի, որոնք համարակալված են 1-ից  $n$  թվերով: Կազմակերպության տնօրենի համարը  $n$ -ն է: Յուրաքանչյուր աշխատակից, բացի տնօրենից, ունի մեկ ղեկավար: Ֆինանսական ճգնաժամի պատճառով տնօրենը որոշում է բոլոր աշխատակիցներին հեռացնել աշխատանքից: Որպեսզի խռովություններ չառաջանան, նա որոշում է աշխատանքից հեռացնել օրական մեկ աշխատակցի, ընտրելով այնպիսի աշխատակցի, ով ենթակա չունի:

Ձեր խնդիրն է պարզել, թե տնօրենը քանի եղանակով է կարող դա անել:

Օրինակ, եթե կա 5 աշխատակից, և 1 և 2 աշխատակիցների ղեկավարը 3-ն է, իսկ 3-ի և 4-ի ղեկավարը՝ 5-ը, ապա կա աշխատակիցներին հեռացնելու 8 եղանակ. 1234, 2134, 4123, 4213, 1423, 1243, 2143 և 2413:

## Մուտքը

Առաջին տողում տրված է աշխատակիցների  $n$  քանակը ( $2 \leq n \leq 128$ ): Հաջորդ  $n-1$  տողերից յուրաքանչյուրում գրված է մեկ թիվ՝  $i$ -րդ տողում գրված է  $i$ -րդ աշխատակցի ղեկավարի համարը:

## Ելքը

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝ աշխատակիցներին ազատելու տարբեր եղանակների քանակը Երաշխավորվում է, որ այդ թիվը չի գերազանցում  $2^{31}$ -ը:

## Օրինակ

Մուտքը.

5  
3  
3  
5  
5

Ելքը.

8